ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--հուլիսի 2023 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ №0 ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ.

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի ապրիլի 12-ի №Ե-452-23 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ խնդրելով ընդունել անհատական որոշում, որի համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը պատկանող՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Մեսրոպ Մաշտոցի փողոցի №0 վարչական շենքի սպառման համակարգի (այսուհետ՝ Սպառման համակարգ)՝ էլեկտրական ցանցին միացման վճարը վերջինիս փոխարեն կվճարի «ԱՄԱԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի ապրիլի 27-ի №Ե-544-23, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2023 թվականի մայիսի 11-ի ՍՄ/ԳԽ-2/11443-2023 գրություններով հայտնել են, որ չեն առարկում Սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի

բաշխման ցանցային կանոնների 156-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Սպառման համակարգը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին միացման վճարը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փոխարեն վճարում է «ԱՄԱԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ վերջիններիս միջև կնքվելիք՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի հիման վրա՝ համաձայն հավելվածի.
   2) Սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագիրը կնքվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հայտն առձեռն ներկայացվելու դեպքում՝ անմիջապես, իսկ փոստային կապի միջոցով ներկայացվելու դեպքում՝ հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ու «ԱՄԱԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--հուլիսի 2023թ.